

<<ՇՄԳԸԲԿ-ԷԱԾԱՊՁԲ 2026-23 >> ծածկագրով Էլեկտրոնային համակարգով, ԷԱԾ ընթացակարգով <<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն >> ՓԲԸ-ի 2026թվականի կարիքների համար <<Ուկտրաձայնային հետազոտությունների համալիր երեք տվիչներով >>-ի ձեռքբերման նիստի

Ք. Գյումրի, Սարուխանյան 1/3 << 02 >> սեպտեմբերի 2026թ.
Ժամը՝ 09³⁰

Պատվիրատուի անվանումը <<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն>>ՓԲԸ

Գտնվելու վայրը ք.Գյումրի, Սարուխանյան 1/3

Մասնակցում էին.

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝	Նախագահ՝	ընտանեկան բժիշկ	Սարգիս Կարապետյան	ԳՊ/ԳԱՊ
	անդամներ՝	գլխ. հաշվապահ	Էմմա Պետրոսյան	ԳՊ/ԳԱ
		ընտանեկան բուժքույր	Քնարիկ Ղևոնդյան	ԳՊ/ԳԱ

հանձնաժողովի քարտուղար / գնումների համակարգող / ՝ Թամարա Գաբրիելյանին ԳՊ/ՄՀՄ:

1. ԷԱԾ միջոցով գնում կատարելու ընթացակարգի հայտերի բացման մասին
----- Սարգիս Կարապետյան -----
(Նախագահի անուն, ազգանուն)

Ընդունելի գիտություն, որ ընթացակարգը իրականացվել է Էլեկտրոնային / eauction / համակարգով

1, ԷԱԾ-ին մասնակցած կազմակերպություններ

Յ/Յ	Կազմակերպության անվանումը	Հասցեն
-----	---------------------------	--------

1	<<Իվաֆարմ>> ՍՊԸ	հասցե Զ.Երևան , Շենգավիթ, Բագրատունյաց 16/4 խանութ հեռախոս (098448856) Էլ. հասցե lvapharm89@gmail.com ՀՎՀՀ 08625799 Հ/Հ 220250126448000
2	<< ԱՅ ԷՍ ԱՅ >> ՍՊԸ	հասցե Զ.Երևան , Փավստոս Բուզանդի փ. 2107, բն6 հեռախոս (095001317) Էլ. հասցե isillc.gnumner@gmail.com ՀՎՀՀ 02874743 Հ/Հ 2500011575600100
3	<< ՏԻԿԱՍՈՆ >> ՍՊԸ	հասցե Զ.Երևան Օրբելի 33Ա, բն 15 հեռախոս (+374 91437410) Էլ. հասցե tikason@inbox.ru ՀՎՀՀ 00218132 Հ/Հ 214000708476100
3	ՍՊԸ ՀԱՐ ԳՐՈՒՊ 5	հասցե Զ.Երևան , Դավիթ բեկի 180/26 հեռախոս (+374 77699551) Էլ. հասցե h5r.gasparyan@yandex.com ՀՎՀՀ 01096027 Հ/Հ 1570067388333800

ա/ Ընկերության կողմից ներկայացված Դիմում –հայտարարությունը պարունակող էլեկտրոնային Պիտանելիության չափորոշիչները կազմեված և ներկայացված են տվյալ ընթացակարգով սահմանված կարգի պահանջներին համապատասխան ,

* բացառությամբ `

ա/1 <<Իվաֆարմ>> ՍՊԸ -ի կողմից կցված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրի մեջ նշված չի եղել ապրանքի ֆիրմային անվանումը և մակնիշը:

Համաձայն ՀՀ Կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41 կետի / Եթե հայտերի բացման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատվող փաստաթղթերը կամ դրանց մի մասը ներկայացված են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով և հաստատված չեն Էլեկտրոնային թվային ստորագրությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ հայտում բացակայում է գնային առաջարկը կամ հայտի ապահովումը, կամ գնային առաջարկը, կամ հայտի ապահովումը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին Էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:/

Գնահատող հանձնաժողովի որոշմամբ <<ՇՄԳԸԲԿ-ԷԱՃԱՊՁԲ 2026-23 >> ծածկագրով Էլեկտրոնային համակարգով, ԷԱՃ ընթացակարգով <<Գյումրու Վ.Աբաջյանի անվան ընտանեկան բժշկության կենտրոն >> ՓԲԸ-ի 2026թվականի կարիքների համար **<<Ուտրաձայնային հետազոտությունների համալիր երեք տվիչներով >>-ի** ձեռքբերման նիստը կասեցվել է , մինչև 2026 թվականի սեպտեմբերի 1 -ին, ժամը 14 ⁰⁰ :

<<Իվաֆարմ>> ՍՊԸ –ին ուղարկվել է ապրանքի ֆիրմային անվանման և մակնիշի շտկում, որը ՍՊԸ-ի կողմից կատարվել է սահմանված ժամկետներում և տվյալ ընթացակարգով սահմանված կարգի պահանջներին համապատասխան :

ա /2 ՀԱՐ ԳՐՈՒԴ 5 ՍՊԸ –ի, որի կողմից ներկայացված Դիմում-հայտարարությունը ստորագրված չէ , ինչպես նաև չի ներկայացվել իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիրը , քանի որ Նշված ընկերության գնային առաջարկը գերազանցել է ապրանքի գնման նախահաշվային գինը և մերժվել է e-AUCTION ծրագրի կողմից , մեր կողմից փաստաթղթերի / Դիմում-հայտարարությունը /շտկում չի ներկայացվել:

բ/ Հայտերի վերաբերյալ հարցումների և ներկայացված պարզաբանումների մասին Հարցումներ եղել են:

Հարցում՝ Հարգելի գործընկեր, Ուսումնասիրելով մրցույթի տեխնիկական բնութագիրը՝ խնդրում ենք պարզաբանել դրանում ներառված որոշ տեխնիկական պահանջների հիմնավորվածությունն ու դրանց համապատասխանությունը գնումների օրենսդրությամբ սահմանված մրցակցության ապահովման սկզբունքներին: 1. Մասնավորապես, տեխնիկական բնութագրում նշված որոշ պահանջներ, ըստ իրենց ձևակերպման և կիրառվող տեխնոլոգիական լուծման, կարծես թե համապատասխանում են կոնկրետ արտադրողի՝ Mindray ընկերության կողմից կիրառվող տեխնոլոգիային: Օրինակ՝ բնութագրում նշված է. «Տեխնոլոգիան պետք է ներառի՝ Դինամիկ պիքսելային կիզակետում (DPF)»:Մեր ուսումնասիրության համաձայն՝ «Dynamic Pixel Focusing (DPF)» տեխնոլոգիական լուծումը կիրառվում է Mindray ընկերության սարքավորումներում, մինչդեռ շուկայում առկա այլ արտադրողներ նույն գործառնությունն ապահովում են այլ տեխնոլոգիական լուծումների միջոցով: 2. Առնվազն՝ Sound Touch Elastography / առանձին պատվերով/» - այս տեխնոլոգիան կիրառում է միայն մեկ արտադրող, այն է Mindray ընկերությունը, իսկ մնացած ընկերությունները կիրառում են այլ տեխնոլոգիական լուծում, բայց ձեռք կողմից ներկայացված բնութագրում կոնկրետ նշված է հենց այդ արտադրողի կողմից կիրառվող տեխնոլոգիան: Նշված է փակագծերում առանձին պատվերով, ինչը նորից խոսում է նրա մասին, որ բնութագիրն արտագրված է արտադրողի տեխնիկական գրքից: 3. Առնվազն IVF, RIMT ծրագրային ապահովումներով» – կարելի է միայն ենթադրել, թե որ ապահովումների մասին է խոսքը, քանի որ Նշված չէ հայերեն նկարագրությունը, սակայն կարելի է իմանալ, թե օրինակ ինչ է նշանակում RIMT ապահովումը, Mindray ընկերության տեխնիկական գրքից: 4. Առնվազն /Gray Map/; /Tint Map/;» - կարելի է միայն ենթադրել, թե որ ապահովումների մասին է խոսքը, քանի որ Նշված չէ հայերեն նկարագրությունը, սակայն կարելի է իմանալ թե օրինակ ինչ է նշանակում Tint Map ապահովումը, Mindray ընկերության տեխնիկական գրքից: 5. Տեխնիկական բնութագրում նշված է «Ֆայլերի ընդլայման ֆունկցիա» պահանջը: Խնդրում ենք պարզաբանել, թե տվյալ ձևակերպմամբ կոնկրետ ինչ ֆունկցիա կամ տեխնիկական հնարավորություն է նկատի առնվում: 6. Նախապես տեղադրված գործառնություններով խելացի /օրինակ Smart/ ծրագրային առնվազն հետևյալ փաթեթների առկայություն՝ - smart 3D - smart OB - smart NT - smart FLC - smart Thyroid - smart Brest - smart Hip - smart HRI - smart Bladder – անհասկանալի է թե ինչ պահանջ է դրել պատվիրատուն նման բան ձևակերպելով, սակայն կարելի է նման ձևակերպումներ գտնել Mindray ընկերության տեխնիկական գրքից, որոնք չկան այլ արտադրողների մոտ: 7. Image quality: HPen/HGen/HRes or HPen/ HPen-FFR/HGen/HRes/HRes-FFR» - անհասկանալի է թե ինչ է նկատի ունեցել պատվիրատուն, սակայն կարելի է նման ձևակերպումներ գտնել Mindray ընկերության տեխնիկական գրքից, որոնք չկան այլ արտադրողների մոտ: 8. Անատոմիական M /Free Xros M/ ռեժիմ - այս տեխնոլոգիան կիրառում է միայն մեկ արտադրող, այն է Mindray ընկերությունը, իսկ մնացած ընկերությունները կիրառում են այլ տեխնոլոգիական լուծում, բայց ձեռք կողմից ներկայացված բնութագրում կոնկրետ նշված է հենց այդ արտադրողի կողմից կիրառվող տեխնոլոգիան: 9. Մատակարարման պարտադիր անհրաժեշտ կոնվեքս և գծային տվիչների համար նշված է, որ նրանք պետք է համատեղելի լինեն կամ գործարկվեն STQ ռեժիմի ժամանակ, որի մասին արդեն նշել ենք, այս տեխնոլոգիան կիրառում է միայն մեկ արտադրող, այն է Mindray ընկերությունը, իսկ մնացած ընկերությունները կիրառում են այլ տեխնոլոգիական

լուծումներ այլ անվանումներով, բայց ձեր կողմից ներկայացված բնութագրում կոնկրետ նշված է հենց Mindray-ի կողմից կիրառվող տեխնոլոգիան: Խնդրում ենք հստակ և հիմնավորված ներկայացնել, թե ի՞նչ օբյեկտիվ տեխնիկական կամ ֆունկցիոնալ անհրաժեշտությամբ են պայմանավորված տեխնիկական բնութագրում ներառված վերոնշյալ պահանջները: Միաժամանակ առաջարկում ենք վերանայել նշված պահանջները, ըստ անհրաժեշտության փոփոխել տեխնիկական բնութագիրը և այն համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին՝ ապահովելով հավասար և արդար մրցակցային պայմաններ բոլոր հնարավոր մասնակիցների համար:

Պարզաբանում` ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ հրավերի պարզաբանման մասին Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2026 թվականի օգոստոսի 25-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն Ընթացակարգի ծածկագիրը «ՇՍԳԸԲԿ-ԷԱՃԱՊԶԲ 2026-23» Գյուժրու 4. Աբաջյանի Անվան Ընտանեկան Բժշկության Կենտրոն ՓԲԸ-ի կարիքների համար «Ուլտրաձայնային հետազոտությունների համալիր երեք տվիչներով սարք»-ի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՍԳԸԲԿ-ԷԱՃԱՊԶԲ 2026-23» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է հրավերի վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 19-ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2026 թվականի օգոստոսի 25-ին տրամադրված պարզաբանումը՝ Հարցադրում N 1 Հարգելի գործընկեր, Ուսումնասիրելով մրցույթի տեխնիկական բնութագիրը՝ խնդրում ենք պարզաբանել դրանում ներառված որոշ տեխնիկական պահանջների հիմնավորվածությունն ու դրանց համապատասխանությունը գնումների օրենսդրությամբ սահմանված մրցակցության ապահովման սկզբունքներին: 1. Մասնավորապես, տեխնիկական բնութագրում նշված որոշ պահանջներ, ըստ իրենց ձևակերպման և կիրառվող տեխնոլոգիական լուծման, կարծես թե համապատասխանում են կոնկրետ արտադրողի՝ Mindray ընկերության կողմից կիրառվող տեխնոլոգիային: Օրինակ՝ բնութագրում նշված է. «Տեխնոլոգիան պետք է ներառի՝ Դինամիկ պիքսելային կիզակետում (DPF)»: Մեր ուսումնասիրության համաձայն՝ «Dynamic Pixel Focusing (DPF)» տեխնոլոգիական լուծումը կիրառվում է Mindray ընկերության սարքավորումներում, մինչդեռ շուկայում առկա այլ արտադրողներ լույս գործառնության ապահովում են այլ տեխնոլոգիական լուծումների միջոցով: 2. Առնվազն՝ Sound Touch Elastography / առանձին պատվերով/» - այս տեխնոլոգիան կիրառում է միայն մեկ արտադրող, այն է Mindray ընկերությունը, իսկ մնացած ընկերությունները կիրառում են այլ տեխնոլոգիական լուծում, բայց ձեր կողմից ներկայացված բնութագրում կոնկրետ նշված է հենց այդ արտադրողի կողմից կիրառվող տեխնոլոգիան: Նշված է փակագծերում առանձին պատվերով, ինչը նորից խոսում է նրա մասին, որ բնութագիրն արտագրված է արտադրողի տեխնիկական գրքից: 3. Առնվազն IVF, RIMT ծրագրային ապահովումներով» - կարելի է միայն ենթադրել, թե որ ապահովումների մասին է խոսքը, քանի որ նշված չէ հայերեն նկարագրությունը, սակայն կարելի է իմանալ, թե օրինակ ինչ է նշանակում RIMT ապահովումը, Mindray ընկերության տեխնիկական գրքից: 4. Առնվազն /Gray Map/; /Tint Map/;» - կարելի է միայն ենթադրել, թե որ ապահովումների մասին է խոսքը, քանի որ նշված չէ հայերեն նկարագրությունը, սակայն կարելի է իմանալ թե օրինակ ինչ է նշանակում Tint Map ապահովումը, Mindray ընկերության տեխնիկական գրքից: 5. Տեխնիկական բնութագրում նշված է «Ֆայլերի ընդլայման ֆունկցիա» պահանջը: Խնդրում ենք պարզաբանել, թե տվյալ ձևակերպմամբ կոնկրետ ինչ ֆունկցիա կամ տեխնիկական հնարավորություն է նկատի առնվում: 6. Նախապես տեղադրված գործառնություններով խելացի /օրինակ Smart/ ծրագրային առնվազն հետևյալ փաթեթների առկայություն՝ - smart 3D - smart OB - smart NT - smart FLC - smart Thyroid - smart Brest - smart Hip - smart HRI - smart Bladder - անհասկանալի է թե ինչ պահանջ է դրել պատվիրատուն նման բան ձևակերպելով, սակայն կարելի է նման ձևակերպումներ գտնել Mindray ընկերության տեխնիկական գրքից, որոնք չկան այլ արտադրողների մոտ: 7. Image quality: HPen/HGen/HRes or HPen/ HPen-FFR/HGen/HRes/HRes-FFR» - անհասկանալի է թե ինչ է նկատի ունեցել պատվիրատուն, սակայն կարելի է նման ձևակերպումներ գտնել Mindray ընկերության տեխնիկական գրքից, որոնք չկան այլ արտադրողների մոտ: 8. Անատոմիական M /Free Xros M/ ռեժիմ - այս տեխնոլոգիան կիրառում է միայն մեկ արտադրող, այն է Mindray ընկերությունը, իսկ մնացած ընկերությունները կիրառում են այլ տեխնոլոգիական լուծում, բայց ձեր կողմից ներկայացված բնութագրում կոնկրետ նշված է հենց Mindray-ի կողմից կիրառվող տեխնոլոգիան: Խնդրում ենք հստակ և հիմնավորված ներկայացնել, թե ի՞նչ օբյեկտիվ տեխնիկական կամ ֆունկցիոնալ անհրաժեշտությամբ են պայմանավորված տեխնիկական բնութագրում ներառված վերոնշյալ պահանջները: Միաժամանակ առաջարկում ենք վերանայել նշված պահանջները, ըստ անհրաժեշտության փոփոխել տեխնիկական բնութագիրը և այն համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին՝ ապահովելով հավասար և արդար մրցակցային պայմաններ բոլոր հնարավոր մասնակիցների համար: Պարզաբանում N 1 Ի պատասխան գնման ընթացակարգի 1-ին չափաբաժնի տեխնիկական բնութագրի վերաբերյալ ներկայացված հարցման՝ գնահատող հանձնաժողովը հայտնում է հետևյալը: Տեխնիկական բնութագիրը կազմվել է՝ լինելով Պատվիրատուի փաստացի կլինիկական կարիքներից, գնվելիք բժշկական սարքավորման նպատակային նշանակությունից և անհրաժեշտ տեխնիկական, կլինիկական ու ֆունկցիոնալ հնարավորություններից: Համակարգը նախատեսված է բազմապրոֆիլ բուժօգնությունների համար՝ սրտաբանական, անոթային, որովայնային, մանկաբարձական-գինեկոլոգիական, մկանավաճառային, Էլաստոգրաֆիկ և շտապ բժշկության հետազոտությունների իրականացման նպատակով, ինչով պայմանավորված են տեխնիկական բնութագրով սահմանված ռեժիմների և ծրագրային փաթեթների պահանջները: «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը պետք է լինեն օբյեկտիվորեն հիմնավորված և համարժեք այն կարիքին, որի բավարարման նպատակով կատարվում է գնումը: Հետևաբար Պատվիրատուն իրավասու է սահմանել իր իրական կարիքի լիարժեք բավարարման համար անհրաժեշտ տեխնիկական, ֆունկցիոնալ և որակական հատկանիշներ: Տեխնիկական բնութագրում օգտագործված տեխնոլոգիական անվանումները, այդ թվում՝ թեք գծերում կամ փակագծերում նշվածները, բերված են որպես համապատասխան գործառնության կամ տեխնոլոգիայի օրինակ: Դրանց նկատմամբ

կիրառվում է «կամ համարժեք» սկզբունքը: Առաջարկվող լուծման համարժեքությունը գնահատվելու է դրա ապահոված տեխնիկական և ֆունկցիոնալ արդյունքով և պետք է հիմնավորվի արտադրողի պաշտոնական տեխնիկական փաստաթղթերով: Կետ 1 — Դինամիկ պիքսելային կիզակետում (DPF) Տեխնիկական բնութագրի 1.1 կետում արդեն իսկ նախատեսված է «ZONE sonography® սկանավորման կամ համարժեք տեխնոլոգիայի» կիրառման հնարավորությունը: Նշված ձևակերպումը տարածվում է ամբողջ կետի, այդ թվում՝ DPF բաղադրիչի նկատմամբ: DPF-ի վերաբերյալ պահանջի բովանդակությունը ծրագրային ճառագայթաձևավորման միջոցով պատկերի յուրաքանչյուր կետի դինամիկ կիզակետման ապահովումն է՝ արձակման և ընդունման փուլերում: Նմանատիպ լուծումները տարբեր արտադրողների կողմից կարող են ներկայացվել տարբեր անվանումներով: Հետևաբար ընդունելի է ցանկացած արտադրողի տեխնոլոգիա, որն ապահովում է պահանջվող համարժեք տեխնիկական և ֆունկցիոնալ արդյունքը: Կետ 2 — Sound Touch Elastography, STE և STQ Պահանջը վերաբերում է ոչ թե որևէ կոնկրետ արտադրողի տեխնոլոգիային, այլ սահմային ալիքի Էլաստոգրաֆիայի իրականացման հնարավորությանը: Տվյալ տեխնոլոգիայի դեպքում ակուստիկ իմպուլսի միջոցով հյուսվածքում առաջանում են լայնակի ալիքներ, որոնց տարածման արագությունը պայմանավորված է հյուսվածքի կոշտությամբ: Տարբեր արտադրողներ համապատասխան գործառնությունը կարող են ներկայացնել տարբեր անվանումներով, օրինակ՝ Shear Wave, ElastQ Imaging, Sound Touch Elastography, STE, SSshearwave, SWM, SWE և այլն: «Sound Touch Elastography», «STE» և «STQ» անվանումները բերված են որպես օրինակներ: Ընդունելի է ցանկացած արտադրողի համարժեք սահմային ալիքի Էլաստոգրաֆիայի տեխնոլոգիա: Կետ 3 — IVF, IMT և RIMT Նշված հապավումներն օգտագործվում են հետևյալ գործառնությունները նկարագրելու համար՝ • IVF՝ ֆոնիկուլների չափման և հաշվարկի ծրագրային փաթեթ, • IMT՝ ինտիմա-մեդիա հաստության չափման հնարավորություն, • RIMT՝ ինտիմա-մեդիա հաստության ավտոմատ չափում իրական ժամանակում: Տվյալ գործառնությունները տարբեր արտադրողների սարքավորումներում կարող են ունենալ տարբեր անվանումներ: Հայտերը գնահատվելու են պահանջվող չափումների և հաշվարկների իրականացման հնարավորությամբ՝ կիրառելով «կամ համարժեք» սկզբունքը: Կետ 4 — Gray Map և Tint Map Gray Map և Tint Map հասկացությունները վերաբերում են ուլտրաձայնային պատկերի ցուցադրման և մշակման կարգավորումներին՝ համապատասխանաբար մոխրագույն սանդղակի քարտեզի և պատկերի երանգավորման քարտեզի ընտրությանը: Դրանք ուլտրաձայնային պատկերավորման ոլորտում կիրառվող գործառնության հասկացություններ են: Ընդունելի են նաև այլ անվանումներով ներկայացված համարժեք լուծումներ, եթե դրանք ապահովում են պահանջվող պատկերի ցուցադրման և մշակման հնարավորությունները: Կետ 5 — «Ֆայլերի ընդլայման ֆունկցիա» «Ֆայլերի ընդլայման ֆունկցիա» ձևակերպմամբ նկատի է առնվում հետազոտության արդյունքների և պատկերների համապատասխան ֆայլային ձևաչափերով պահպանման, մշակման և արտահանման հնարավորությունը: Տեխնիկական բնութագրի հետագա մասում տվյալ պահանջը հստակեցված է՝ նախատեսելով BMP, JPG, TIFF, DCM, AVI, MP4 և RAW ձևաչափերով աշխատելու հնարավորությունը: Հետևաբար պահանջը վերաբերում է նշված կամ դրանց համարժեք ֆայլային ձևաչափերով աշխատանքի ապահովմանը: Կետ 6 — Խելացի ծրագրային փաթեթներ Տեխնիկական բնութագրի 1.2.3 կետում «Smart» անվանումը բերված է որպես օրինակ: Պահանջը վերաբերում է հետևյալ կլինիկական գործառնությունների ավտոմատացմանը՝ անկախ արտադրողի կիրառած առևտրային անվանումներից՝ • ազատ ձեռքի 3D վերակառուցում, • մանկաբարձական բիոմետրիայի ավտոմատ չափում, • պտղի ծոծրակային թափանցիկության՝ NT-ի ավտոմատ չափում, • ֆոնիկուլների ավտոմատ հաշվարկ, • վահանագեղձի հանգույցների կառուցվածքային գնահատում, • կրծքագեղձի գոյացությունների կառուցվածքային գնահատում, • նորածնի ազդրի հոդի անկյունների չափում՝ Graf մեթոդով, • հեպատո-ռենալ ինդեքսի հաշվարկ, • միզապարկի ծավալի ավտոմատ չափում: Ընդունելի է ցանկացած արտադրողի ծրագրային փաթեթ, որն ապահովում է թվարկված գործառնությունները՝ անկախ փաթեթի առևտրային անվանումից: Կետ 7 — HPen, HGen և HRes Նշված պահանջը վերաբերում է ներդաշնակ պատկերավորման հաճախականային ռեժիմների ընտրության հնարավորությանը, որը տարբեր արտադրողների համակարգերում կարող է ներկայացվել տարբեր անվանումներով: Պահանջվող ռեժիմների գործառնության նշանակությունը հետևյալն է՝ • HPen (Harmonic Penetration)՝ թափանցելիությանը միտված ռեժիմ՝ ցածր ներդաշնակ հաճախականությամբ, խորը տեղակայված կառուցվածքների հետազոտման համար, • HGen (Harmonic General)՝ ընդհանուր և հավասարակշռված ռեժիմ՝ միջին ներդաշնակ հաճախականությամբ, • HRes (Harmonic Resolution)՝ լուծունակությանը միտված ռեժիմ՝ բարձր ներդաշնակ հաճախականությամբ, մակերեսային կառուցվածքների հետազոտման համար, • HPen-FFR և HRes-FFR՝ թափանցելիության և լուծունակության ռեժիմների տարբերակներ՝ լրացուցիչ հաճախականային մշակմամբ: Ռեժիմների քանակը՝ երեք կամ հինգ, կախված է տվիչի տեսակից, ինչն արտացոլված է տեխնիկական բնութագրի «or» ձևակերպմամբ: Ընդունելի է ցանկացած արտադրողի համարժեք ռեժիմային լուծում՝ անկախ կիրառված անվանումներից: Կետ 8 — Անատոմիական M ռեժիմ Պահանջը վերաբերում է անատոմիական կամ ազատ անկյան M ռեժիմի առկայությանը: Free Xros M անվանումը բերված է որպես տվյալ գործառնության օրինակ: Անատոմիական M ռեժիմը տարբեր արտադրողների սարքավորումներում կարող է ներկայացվել տարբեր անվանումներով: Ընդունելի է ցանկացած համարժեք լուծում, որն ապահովում է պահանջվող անատոմիական M ռեժիմի գործառնությունը: Կետ 9 — Տվիչների Էլաստոգրաֆիկ կիրառություն Կոնվեքս և գծային տվիչների կիրառությունների ցանկում «STE&STQ» նշումը բերված է որպես համապատասխան գործառնության օրինակ: Պահանջն այն է, որ մատակարարվող կոնվեքս և գծային տվիչներն ապահովեն սահմային ալիքի Էլաստոգրաֆիայի իրականացումը՝ անկախ արտադրողի կիրառած տեխնոլոգիական կամ առևտրային անվանումից: Ընդունելի է ցանկացած արտադրողի համարժեք լուծում, որը տվյալ տվիչներով ապահովում է պահանջվող Էլաստոգրաֆիկ հետազոտությունների իրականացումը: Հարգելի մասնակից ձեր հարցմամբ մատնանշված DPF, Sound Touch Elastography, STE, STQ, IVF, IMT, RIMT, Gray Map, Tint Map, Smart ծրագրային փաթեթներ, HPen, HGen, HRes և Free Xros M անվանումների առկայությունը չի նշանակում որևէ կոնկրետ արտադրողի սարքավորման ձեռքբերման պարտադիր պահանջ: Պատվիրատուի համար որոշիչ է պահանջվող տեխնիկական, կլինիկական և ֆունկցիոնալ արդյունքի ապահովումը, այլ ոչ թե համապատասխան գործառնության կամ տեխնոլոգիայի անվանման նույնականությունը որևէ արտադրողի կողմից կիրառվող անվանմանը: Միայն այն հանգամանքը, որ որոշ արտադրողներ համապատասխան գործառնություններն իրենց տեխնիկական փաստաթղթերում ներկայացնում են նույն կամ նման անվանումներով, բավարար հիմք չէ եզրակացնելու, որ տեխնիկական բնութագիրը կազմվել է որևէ կոնկրետ արտադրողի համար կամ սահմանափակում է մրցակցությունը: ՀՀ կառավարության 2017 թվականի

մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 109-րդ կետի համաձայն՝ պայմանագրի կատարման արդյունքի վերաբերյալ դրական եզրակացություն կարող է տրվել նաև այն դեպքում, երբ մատակարարված ապրանքի որակական հատկանիշները գերազանցում են պայմանագրով սահմանված պահանջները՝ ապահովելով Պատվիրատուի կարիքի բավարարումը: Հետևաբար ցանկացած արտադրողի կողմից առաջարկվող լուծում, որն արտադրողի պաշտոնական տեխնիկական փաստաթղթերով հիմնավորված կերպով ապահովում է տեխնիկական բնութագրով պահանջվող համարժեք կամ ավելի բարձր տեխնիկական, կլինիկական և ֆունկցիոնալ արդյունքը, կգնահատվի սահմանված պահանջներին համապատասխան:

- զ/ Ներկայացված բողոքների և դրանց վերաբերյալ կայացված որոշումների մասին Բողոքներ չեն եղել :
- դ/ Հակաօրինական գործողությունների հայտնաբերվելու դեպքում դրան և այդ կապակցությամբ ձեռնարկված գործողություններ չեն հայտնաբերվել :

2. Ընդունելի գիտություն, որ գնման հայտով սահմանված՝ սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների գնման գինը հետևյալն է

Չափաբաժինների համարներով	Գնման գին	Չափաբաժնի անվանումը
1	9 500 000	Ուլտրաձայնային հետազոտությունների համալիր երեք տվիչներով 1. Ընդանուր նկարագրություններ 1.1. Ուլտրաձայնային համակարգ ընդհանուր պատկերավորման համար՝ նորարարական հատկանիշներով: Գոտիների սկանավորման /ZONE sonography®/ կամ համարժեք տեխնոլոգիայի վրա հարթակը պետք է բարձրացնի ուլտրաձայնային պատկերի որակը ավելի բարձր մակարդակի վրա՝ գոտիների սկանավորման և տվյալների մշակման միջոցով: Տեխնոլոգիան պետք է ներառի՝. • Դինամիկ պիքսելային կիզակետում (DPF); • Պատկերների և կինո-լուսանկարի ամբողջական հետմշակման հնարավորություն (TRI); • Բարելավված ալիքային տվյալների մշակում՝ մշակվող գրանցումների թիվը ոչ պակաս քան 245.000 Համակարգը նախատեսված պետք է լինի սրտաբանական, որովայնային, անոթների, փոքր և մակերեսային օրգանների, հոդերի, նյարդաբանության, ուրոլոգիայի, գինեկոլոգիայի, շտապ բժշկության, 3D/4D և այլ հետազոտությունների համար: 1.2. Համակարգի նկարագրությունը: 1.2.1. Հիմնական միավոր-աշխատանքային միջավայր և տեղեկատվության պահպանման համակարգ առնվազն –1Tb HDD; Պարտադիր ներկառուցված 4D, CW, ECG, Shear Wave Elastography, DVR մոդուլներով: 1.2.2. Առնվազն՝ B/M/PW/HPRF/Color/Color M/Power/Directional Power Doppler Flow Imaging պատկերավորման ռեժիմներ; Strain Elastography; Sound Touch Elastography / առանձին պատվերով/; Հյուսվածքային Դոպլեր և Tissue կամ Speckle tracking quantitative analysis; IVF, IMT, RIMT ծրագրային ապահովումներով և իրենց ֆունկցիոնալ ենթածրագրային ապահովման փաթեթներով՝ - Պատկերի ավտոմատ օպտիմիզացիա ըստ ընթացիկ հյուսվածքների բնութագրերի; - /Gray Map/; /Tint Map/; - Պատկերի պրոֆիլի բարելավում, օպտիմալացում առնվազն 7 մակարդակ; - Տարբեր անկյուններից պատկերների վերադրում և միջինացում առնվազն; - Ուժեղացման կարգավորումը սկանավորման գծի երկայնքով /LGC/՝ առնվազն 8 մակարդակ; - Իրական ժամանակում երկու տարբեր տիպի պատկերների ներկայացում դիտարկման համար; - Մեկ/չորս պատուհանով Էկրան; - Տեսադաշտի ընդլայնում պատկերների միացմամբ; - Գծերի լայնության սանդղակի ցուցադրում; - Կոնտրաստի կարգաբերման ֆունկցիա; - Աղմուկների ճնշման ֆունկցիա, առնվազն 6 մակարդակ; - Մեկ ընդլայնված պատկերի ստեղծման ֆունկցիա մի շարք անհատական պատկերների շրջանակներից; - Ընթացիք ժամանակում պանորամային պատկերացում; - Սրտաբանության

		հատուկ ռեժիմ, որը կոնտրաստային լուծանելիությամբ բարելավում է սրտի կառուցվածքի և սահմանների պատկերավորումը; - Պատկերի չափսերի փոփոխությունն առնվազն 0,8-4 անգամ տիրույթում; - Պատկերի դետալիզացման և կոնտրաստավորման բարձրացում հետահայաց տվյալների մշակման արդյունքում ընտրված տարածքում առնվազն 3 մակարդակների; - Մշուշի հեռացման ֆունկցիա առնվազն 0-30 մակարդակի; - Ճառագայթի ուղղվածության կարգավորում՝ առնվազն 5 դիրք; - Ֆայլերի ընդլայման ֆունկցիա; - Հարակից առնվազն 6 պատկերների միջինացնելով՝ պատկերի օպտիմալացում և աղմուկների հեռացում; - Աղմուկների ճնշում և պատկերի հստակացում առնվազն 4 մակարդակի; - Պատկերների շեշտակության բարձրացում՝ ընդգծելով տարբեր ակուստիկ հատկություններ ունեցող հյուսվածքների միջև սահմանները առնվազն երեք մակարդակի; - Առանձին գոտիներում պատկերի հստակության բարձրացման ֆունկցիա; - Ճառագայթի արագ թեքում; - ROI; - Գունային հոսքի արագության միջակայքը կարգավորելու ֆունկցիա; - Հոսքերի օպտիմալացում՝ L, M, H; - Հոսքի ցուցադրման մակարդակ սահմանելու ֆունկցիա; - Կրկնակի պատուհան; - Գույների ինվերսիա; - B ռեժիմի պատկերի առավելագույն լայնությունը գունավոր ROI-ի լայնությամբ սահմանելու և սահմանափակելու ֆունկցիա; - Հոսքի մեջ նշված արագության միջակայքի նշում; - Հոսքը հայտնաբերելու ունակության ցուցիչ գունային հոսքի ճշգրտությունը կարգավորելու համար; - Հոսքի գունավորման ճշգրտության կարգավորման հնարավորություն; - Գործառույթ, որը թույլ կտա կիրառել ստերեոսկոպիկ էֆեկտ անոթներում հոսքի վրա առնվազն երեք մակարդակի; - Արյան անոթների նուրբ կառուցվածքի ցուցադրման ուժեղացում; - “Պատ” տիպի կարգավորվող ցածր հոսքի գտիչ; - Հետազոտվող ծավալի խորությունը ազատորեն ընտրելու ֆունկցիա; - Սքանավորման արագությունների տիրույթը պետք է ներառի առնվազն; - Duplex/Triplex; - Ժամանակի և տարածական լուծման միջև հավասարակշռությունը կարգավորում առնվազն; - Սպեկտրը հետազոծելու և PW ռեժիմի պատկերի պարամետրերը ավտոմատ հաշվարկելու ֆունկցիա; - Սպեկտրի հետազոծման զգայունության սահմանման ֆունկցիա առնվազն; - Ավտոմատ հաշվարկի համար սրտի ցիկլի թվի սահմանում առնվազն; - Սպեկտրը հետևելու և PW/CW ռեժիմի պատկերի պարամետրերը հաշվարկելու ֆունկցիա; - Հետազոծելիս հարթ մակարդակը սահմանելու ֆունկցիա առնվազն; - Դոպլերի վեկտորի և հոսքի միջև անկյունը կարգավորում; - Պատկերների որակի կարգաբերում առնվազն ..մակարդակ; - Պատկերների արագ օպտիմիզացիայի ֆունկցիա; - M սահքի արագության կարգաբերում; 1.2.3. Նախապես տեղադրված գործառնություններով խելացի /օրինակ Smart/ ծրագրային առնվազն հետևյալ փաթեթների առկայություն՝ - smart 3D - smart OB - smart NT - smart FLC - smart Thyroid - smart Brest - smart Hip - smart HRI - smart Bladder - հնարավոր այլ խելացի ծրագրային փաթեթներ առանձին պատվերով 1.2.4. Աջակցումներ օգտագործողին Աջակցվող լեզուները պարտադիր՝ ռուսերեն, անգլերեն: Անոտացիաների ձայնային մոնիթորինգի աջակցություն /առանձին պատվերով/ Աջակցություն սենսորային Էկրանին ձեռագիր նշումներին: Ոչ պակաս քան 230 մարմնի պիտակներ: Կարգավորելի տեքստի տառատեսակի չափերը և ոճերը. . . . 8. Մատակարարման պայմանները 1. Սարքին /Հիմնական միավոր/ տրվող գործարանային երաշխիքը պետք է լինի ոչ պակաս 24 ամիս իսկ տվիչներին ոչ պակաս 18 ամիս տեղակայումից հետո՝ շահագործման և պահպանման պահանջները չխախտելու պարագայում 2. Սարքը պետք է տեղակայվի 2026թվականին, Պայմանագրի ստորագրումից հետո 20-30 օրվա ընդացքում, ք. Գյումրի, Սարուխանյան 1/3 3. Գինը պետք է ներառի՝ մատակարարում, տեղակայում, օպերատորական ուսուցում և մասնագիտական ուսուցում տեղում՝
--	--	---

3, ՇՄԳԸԲԿ-ԷԱՃԱՊԶԲ 2026-23 ծածկագրով ԳՅՈՒՄՐՈՒ Վ.ԱԲԱԶՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ-ի 2026ԹՎԱԿԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ <<Ուլտրաձայնային հետազոտությունների համալիր երեք տվիչներով >>-ի –ի ՁԵՌՔԵՐՈՒՄ մրցույթի էլեկտրոնային աճուրդի մկնարկային և վերջնական գները հետևյալն են

Ավաբաժնի համար	Չբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Նախնական առաջարկ			Վերջին առաջարկ			Մասնակցի կարգավիճակ	Շնորհման կառավարում
				Արժեք	ԱԱՀ	Գին	Արժեք	ԱԱՀ	Գին		
1	1	Իվաֆարմ ՍՊԸ  Ապրանքի ամբողջական նկարագիր	9500000 AMD	15000000 AMD	0 %	15000000 AMD	7400000 AMD	0 %	7400000.00 AMD		
1	2	«ԱՅ ԷՍ ԱՅ» ՍՊԸ  Ապրանքի ամբողջական նկարագիր	9500000 AMD	9300000 AMD	0 %	9300000 AMD	7500000 AMD	0 %	7500000.00 AMD		
1	3	ՏԻԿԱՍՈՆ ՍՊԸ  Ապրանքի ամբողջական նկարագիր	9500000 AMD	14567000 AMD	0 %	14567000 AMD	14567000 AMD	0 %	14567000.00 AMD	Մերժված	
1	4	ՀԱՐ ԳՐՈՒԴ 5 ՍՊԸ  Ապրանքի ամբողջական նկարագիր	9500000 AMD	16854012 AMD	20 %	20224814.4 AMD	16854012 AMD	20 %	20224814.40 AMD	Մերժված	

5, ՇՄԳՐԿ-ԷԱՃԱՊՁԲ 2026-23 ծածկագրով ընթացակարգի նախնական 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներ

Հ/Հ	Կազմակերպության անվանումը	Չափաբաժին
1	<<Իվաֆարմ>> ՍՊԸ	1

6, Ընդունելի գիտություն ընթացակարգի հայտի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել
 2026 թվականի սեպտեմբերի 14-ին, ժամը 10⁰⁰ -ին, ընկերության շենքում, ք.Գյումրի, Սարուխանյան 1/3, I-ին մասնաշենք հասցեում:
 Քննարկվող հարցեր Ամփոփել

Փաստաթղթերի գնահատման արդյունքները հաստատել՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին՝ ըստ չափաբաժնի,
 որից կպահանջվի որակավորման ապահովման համապատասխան փաստաթղթերը և մասնակցին կներկայացվի կնքվելիք Պայմանագիրը
 / Պայմանագրի ապահովում պարտադիր ներկայացնել/:

Ընդունվել է որոշում՝ 3 կողմ – , 0 դեմ – :

Հանձնաժողովի նախագահ՝

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝


նախագահ՝ ընտանեկան բժիշկ

անդամներ՝ գլխ. հաշվապահ

ընտանեկան բուժքույր

հանձնաժողովի քարտուղար / գնումների համակարգող/՝

Տնօրեն



Սարգիս Կարապետյան սյան ԳՊ/ԳԱՊ

Էմմա Պետրոսյան ԳՊ/ԳԱ

Քնարիկ Ղևոնդյան ԳՊ/ԳԱ

Թամարա Գաբրիելյանին ԳՊ/ՄՀՄ:

Սուսան

Պետրոսյան